

մի գնոյն գիրքն օրինակաց, սկսայ յառաջացուցանել զսոյնս մեծաւ աշխատութեամբ... Սարգիս Վ. եւ Արքեպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի:

2. “Սողոմոն Դռ-Նի, տպեցեալ աշխատութեամբ Սարգսի Արքեպիսկոպոսի Կ. Պօլսեցւոյ, ի Հայրապետութեան Հայոց Տեառն Ղազարու: Յամի Տեառն 1748 ի Մայիսի 2: Ի Վէնէտիկ, ի տպարանի Անտօնի Պօլթօլի. (Չարբհ. Մատ. էջ 602.) Այս եւ ուրիշ հինգ գրքերու վէնէտիկի Մի. Մատենագարանի օրինակներու մասին ինձ տեղեկութիւն տուաւ Գեր. Հ. Մկրտիչ Պօտուրեան:

Մեծութիւն էջ 10.5×6 սմ. էջք 1—372. քանի մը պատկեր:

Էջ՝ 1—355 Սաղմոս. էջ 355—360 Հաւատով խոստովանիմ. էջ 361—364 Աղօթք Նարեկայ, էջ 365—372. Ցանկ սաղմոսաց:

3., 4. եւ 5. Էֆիմէրէ: Գիրք որ ինչ Էֆիմէրէ: Նախ պարունակի ասա շրջան մը շնորհակցութեան տարեկան զեկուցմանց: Եւ ասպա հետոյ յանձնարարական խօսքով սկսեցաւ ի Մարտիէն եւ ի Ղարսի գրքաց վերջեցաց: Երկրորդն, նաեւ առակցի (4.) Համարանքի նման Տօմարէն Հայոց, որով հասարակաբար վարի այժմ ազգս Հայոց: Որք վերջոյն տպագրեցեալք եղեն ջանիւ Սարգիս արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցւոյ: Յամի Տեառն 1748, ի յունիսի 20, եւ ի Հայոց ՌՃՂԷ. Երրորդ՝ յաւելեալ լինի ի վերջն (5.) Գրքով ինչ լուսն Նիսիսի մասնաւորութեան, Սրբոյն Թօմայի Հրեշտակական վարդապետի, որ ըստ խնդրոյ իմ՝ թարգմանեցեալ եղև ի Ղարսի գրքաց վերջեցաց: Ի Վէնէտիկ, ի տպ. Անտօնի Պօլթօլի: (Ն. Չ. Մատեն. էջ 198:)

Մեծութիւն 10.5×6 սմ. պատկերազարդ:

Էջ 1—72 Էֆիմէրէ: